

## Սիրելի ուսանողներ,

Մարտի 30-ից սկսած LACC-ի բոլոր դասընթացները տեղի կունենան առցանց, բացառությամբ ստորև բերված Learning Foundations դասընթացներից: Սա ներառում է մեր non-credit և dual enrollment դասընթացները: Dual enrollment դասընթացները առաջարկվում են տեղային ավագ և միջնակարգ դպրոցներում: Այս փոփոխությունն արվում է COVID-19-ի տարածելու ներուժը նվազագույնի հասցնելու և Լոս Անջելեսի քաղաքապետի ու Կալիֆոռնիայի նահանգապետի միացեք-տանը կարգադրությունները պահպանելու համար: Անցած երկուշաբթի օրվանից սկսած ձեր դասախոսները պատրաստում են և իրենց դասընթացները տեղափոխում են այս նոր առցանց միջավայր, և շատերը շարունակում են դա անել այս շաբաթվա գարնանային արձակուրդների ընթացքում:

Ձեզանից ոմանք գուցե այս շաբաթ փորձել են կապնվել ձեր դասախոսների հետ: Խնդրում ենք համբերատար լինել, եթե նրանք չեն պատասխանել: Նրանք քրտնաջան աշխատում են, որպեսզի իրենց դասընթացները պատրաստ լինեն երկուշաբթի մարտի 30-ի համար, և նրանցից շատերը գարնանային արձակուրդը անց են կացնում իրենց ընտանիքների հետ: Վստահ եղեք, որ նրանք կկապնվեն ձեզ հետ, երբ սեմեստրը վերսկսվի հաջորդ երկուշաբթի՝ մարտի 30-ին: Եթե դեռ չեք այցելել ձեր ուսանողական պորտալը, ապա խնդրում ենք դա անել հիմա՝ վստահ լինելու համար, որ դուք կարող եք մուտք գործել canvas և տեսնել թե այժմ որ դասերի մեջ եք ընդգրկված: Դուք պետք է որ կարողանալ տեսնել «course cards» ձեր յուրաքանչյուր դասի համար canvas-ի էջում, բայց միգուցե չկարողանաք մուտք գործել տվյալ դաս, մինչ դեռ դասախոսը չտեղադրի դասընթացի վահանակը: Այդ բոլորը պետք է ձեզ համա ռբաց լինեն մինչև երկուշաբթի: Այդ ժամանակ, եթե դուք դեռ չեք կարողանում մուտք գործել, կարող եք դասախոսին տեղյակ պահել, որ վահանակը դեռ բացված չէ:

Հետևյալ դասընթացները (աղյուսակ 1) մարտի 30-ին տեղի չեն ունենալու առցանց կամ անձամբ: Այս դասընթացները ժամանակավորապես դադարեցված են, մինչ դեռ նրանց համար ապահով չլինի դասերը վերսկսել քոլեջում: Learning Foundations ուսանողների հետ առանձին կապ կհաստատի պրոֆեսոր Դոննա Մորլին:

### Աղյուսակ 1. Ժամանակավոր հետաձգված դասեր

LRNFDTN	001	Adapted Keyboarding
LRNFDTN	002	Adpt Word Proc Oper
LRNFDTN	003	Adpt Computer Oper

LRNFDTN	040	Intro Lrn Dsblties
---------	-----	--------------------

Կան մի քանի լրացուցիչ դասընթացներ, որոնք ձեր դասախոսները գտել են, որ ուսուցման մի մասը պետք է իրականացվի քոլեջում (աղյուսակ 2): Այս դասընթացները թերևս կսկսվեն առցանց՝ մարտի 30-ից սկսած: Դասախոսները վերակազմավորելու են դասերը, որպեսզի կարողանան կենտրոնանալ այն նյութերի վրա, որոնք այժմ կարող են տեղադրվել առցանց: Երբ քոլեջում ուսուցումը արդեն թույլատրեն վերսկսել, այս դասընթացները կլինեն առաջին դասընթացները, որոնք տեղի կունենան քոլեջում: Այս դասընթացների դասախոսները կանդրադառնան դասընթացի ընթացքին, երբ դասերը վերսկսվեն մարտի 30-ին առցանց:

Աղյուսակ 2. Առցանց տեղի ունեցող դասընթացներ, որոնց որոշակի մասը, իհարկե, պահանջվում է, որ դասավանդվեն քոլեջում: Դրանք կորոշվեն ավելի ուշ:

ART	250	Intro To Digital Art
ART	604	Graphic Design I
CH DEV	022	Pract In Child Dev I
CH DEV	023	Pract In Chld Dev II
CINEMA	007	Adv Mo/Pic Photo
CINEMA	038-1	Motion Picture Stg A
CINEMA	038-2	Motion Picture Stg B
DEN TEK	103	Complete Dent Pros I
DEN TEK	109	Fixed Prosthetics I
DEN TEK	112	Removable Prosthodontics III
DEN TEK	203	Ceramic Restrn
DEN TEK	206	Fixed Prosthodontics III
FAM &CS	024	Food Preparation
KIN	201-1	Swimming-Non/Swim I
KIN	202	Lap Swimming Skills
KIN	266-1	Badminton Skills - I
KIN	266-2	Badminton Skills - II
KIN	271-1	Tennis Skills - I
KIN	271-2	Tennis Skills - II

KIN	285	Directed Study
KIN	289-1	Soccer Skills I
KIN	289-2	Soccer Skills II
KIN	300-1	Swim-Nonswimmer I
KIN MAJ	117	Personal Trainer Instr
REGNRSG	105	Beg Medical Surgical
REGNRSG	106	Nrsg Chldbrng Family
REGNRSG	107	Nrsg Care Pediatric
REGNRSG	108	Nursing Care, Client
REGNRSG	109	Intermediate Medical
REGNRSG	111	Nursng Ledshp & Mangmnt
REGNRSG	115	Nrsng Skills Cmptncyi
REGNRSG	116	Nursing Skills Competency II
REGNRSG	117	Nursing Skills Competency III
T V	046	T V Production
T V	048	T V Workshop
T V	049	Tv Production Worksp

**Հիշեք, որ բոլոր դասընթացները, բացառությամբ 1-ին աղյուսակի դասընթացների, կանցկացվեն առցանց՝ սկսած երկուշաբթի օրվանից՝ մարտի 30-ից: Մի մոռացեք, որ երեքշաբթի օրը, մարտի 31-ը, տոն է:**

LACC կայքն ունի մի շարք հղումներ և ռեսուրսներ, որոնք կօգնեն ձեզ այս անցման ժամանակաշրջանում: Խնդրում ենք այցելել և շրջել <https://lacitycollege.edu/Students/Online-Assistance> կայքով: Եթե լրացուցիչ հարցեր կամ մտահոգություններ կունենաք, գրեք մեզ հետևյալ էլեկտրոնային հասցեով [hotline-students@lacitycollege.edu](mailto:hotline-students@lacitycollege.edu):